 2025 special issue1

https://doi.org/10.46991/hc.2025 . si1.217

An attempt to separate cimmerian culture from the cimmerian-scythian cultural community penetrated into the Armenian Highland
(On Archaeological Data)

Garegin Tumanyan
https://orcid.org/0000-0002-6696-0093
NAS RA Senior Researcher at the Department of Early Archaeology of the Institute of Archaeology and Ethnography, Doctor of Sciences in History
gstumanyan@gmail.com

Keywords - Armenian Highland, Cimmerian, characteristic, typical, sepulchre, settlement, archaeological culture, stele.

Because of the unity of Cimmerian and Scythian cultures, separating Cimmerian culture from the Cimmerian-Scythian cultural community is difficult. Yet, the similarity of these cultures is morphological rather than typological, meaning that these tribal groups share the same economical-cultural type but represent different archaeological cultures. Specifically, Cimmerian culture lacks a constituent of the "Scythian triad" – beast style. Instead, a geometrical ornament, especially, rhombus inscribed into circle is typical for Cimmerian culture. The specificities of Cimmerian and Scythian funereal constructions, funerary sculptures, and funerary rituals (particularly, skeleton positions) are discussed. Differences were observed in weapon sets and horse trappings. So far, the study identified 57 sepulchres belonging to 14 graveyards, 5 "other" graveyards, and 9 settlements that have the needed quantity of characteristics/items typical for Cimmerian culture. An inference could be made that Shirak Plateau was one of the main regions where Cimmerians were settled, where from they could penetrate into the western part of Aragatsotn province. Their trace is also detected in the West of the Armenian Highland – in provinces Bardzr Hayk, Tsopk and Aghdznik. Presumably, a considerable mass of Cimmerian tribes settled next to the Minor Armenia – in Gamirk, where from they moved to the North and West.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 217-234.

Received: 11.11.2024
Revised: 17.12.2024
Accepted: 17.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author[s] 2025

Հայկական լեռնաշխարհ ներթափանցած կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունից կիմերական մշակույթի առանձնացման փորձ (Ըստ հնագիտական տվյալների)

Գարեգին Թումանյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.դ.

Հիմնաբառեր - Հայկական լեռնաշխարհ, կիմերական, հատկանիշ, բնորոշիչ, դամբարան, բնակատեղի, հնագիտական մշակույթ, կոթող:

Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունից կիմերական մշակույթի տարանջատումը բարդ խնդիր է, քանի որ կիմերական ու սկյութական մշակույթները նման են իրար: Առկա նմանությունները, սակայն, ավելի շուտ ձևաբանական են, քան տիպաբանական: Դրանից բխում է, որ քննարկվող ցեղախմբերը պատկանում են նույն տնտեսական-մշակութային տիպին, բայց ոչ միևնույն հնագիտական մշակույթին: Հատկապես հարկ է նշել «սկյութական երրորդության» բաղադրիչներից մեկի՝ կենդանական ոճի, բացակայության փաստը կիմերական մշակույթում: Դրա փոխարեն վերջինիս բնորոշ է երկրաչափական զարդաբանվածքը, հատկապես՝ շրջանի մեջ ներառված շեղանկյան պատկերով հորինվածքը: Քննարկվում են կիմերական ու սկյութական դամբանային կառույցների, մահարձանների և թաղման ծիսակարգերի (մասնավորապես՝ կմախքների դիրքի) առանձնահատկությունները: Տարբերություններ են նկատվում զենքի ու ձիասարքի հավաքածուներում: Կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում՝ մեր կողմից առայժմ ընտրվել են 14 դամբանախմբերի պատկանող 57 դամբարաններ, 5 «այլ» դամբանախմբեր և 9 բնակատեղիներ, որոնցից յուրաքանչյուրում առկա են կիմերական մշակույթին բնորոշող անհրաժեշտ քանակությամբ հատկանիշներ կամ հատկանիշ հանդիսացող իրեր: Կարելի է եզրակացնել, որ կիմերների սփռման հիմնական տարածքներից մեկը Շիրակի սարահարթն է, որտեղից նրանք կարող էին ներթափանցել Արագածոտն գավառի արևմտյան մասերը: Նրանց հետքը նշմարվում է նաև Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Բարձր Հայքում, Ծոփք և Աղձնիք նահանգներում: Կիմերական ցեղախմբերի մի զգալի զանգված, ըստ երևույթին, հիմնավորվել է Գամիրքում՝ Փոքր Հայքի հարևանությամբ, որտեղից շարժվել է դեպի հյուսիս և արևմուտք:

Попытка выделения киммерийской культуры из киммерийско-скифской культурной общности, проникшей на Армянское нагорье
(По археологическим данным)

Гарегин Туманян
НАН РА старший научный сотрудник Института археологии и этнографии, д.и.н.

Ключевые слова - Армянское нагорье, киммерийский, признак, характеризующий, погребение, поселение, археологическая культура, стела.

Ввиду единства киммерийской и скифской культур, выделение киммерийской культуры из киммерийско-скифской культурной общности является сложной задачей. Однако их существующее сходство носит скорее морфологический, нежели типологический характер. Это значит, что рассматриваемые племенные группы относятся к одному и тому же хозяйственно-культурному типу, но к различным археологическим культурам. Особо следует отметить факт отсутствия в киммерийской культуре одного из компонентов «скифской триады» - звериного стиля. Вместо этого для киммерийской культуры характерен геометрический орнамент, особенно композиция с изображением ромба, вписанного в окружность. Обсуждаются особенности киммерийских и скифских погребальных сооружений, надгробных изваяний и погребальных ритуалов (в частности, положения скелетов). Наблюдаются различия в наборах оружия и конского снаряжения. В результате исследовательской работы, на данный момент из 14 групп нами отобраны 57 погребений, 5 «других» групп погребений и 9 поселений, в каждом из которых присутствует необходимое количество признаков или предметов, являющихся характерными для киммерийской культуры. Можно сделать вывод, что одной из основных областей расселения киммерийцев являлось Ширакское плато, откуда они могли проникнуть в западную часть провинции Арагацотн. Их след замечен также на западе Армянского нагорья - в провинциях Бардзр ԻАйк, Цопк и Ахдзник. Значительная масса киммерийских племенных групп, по-видимому, обосновалась по соседству с Малой Арменией, в Гамирке, откуда они двинулись на север и запад.

* * *

Մուտք: Կիմերների ներխուժումներն Առաջավոր Ասիա, հավանաբար, կայացել են մ.թ.ա. 714 թվականից ոչ ուշ, երբ նրանք արդեն հասել էին Ուրարտուի սահմաններին

[Sulimirski, 1954, 283; Иванчик, 1990, 8, 16; Алексеев, 1992, 28; Ivantchik, 2001, 14]: Սկյութները, ըստ երևույթին, մոտ 30-35 տարի հետո են արշավել Հայկական լեռնաշխարհ և այստեղ են հայտնվել մ.թ.ա. VII դարի 80-ական թվականների երկրորդ կեսին: Ըստ դիտարկումների՝ Արևելյան Եվրոպայում «կիմերական» տիպի հուշասյուների ստեղծման ավանդույթը հանկարծակի դադարում է և նույն տարածքում դրանք փոխարինվում են սկյութական կոթողներով [Ольховский, 2005, 93]: Կարծիք է հայտնվել, որ Արևելյան Եվրոպայի տափաստաններում հայտնի չէ որևէ հնագիտական մշակույթ, որը կարելի է միարժեքորեն մեկնաբանել որպես «կիմերական» [Алексеев, 1992, 77]: Նշվել է, որ «կիմերական» հնագիտական մշակույթն ինչպես եղել է, այդպես էլ մնացել է խնդրահարույց, սակայն այդ հիմնախնդրի լուծման ճանապարհներ կարելի է գտնել [Иванчик, 1996, 14, 15]: Հյուսիսմերձսևծովյան տափաստանների վաղերկաթեդարյան դարաշրջանի սկզբնական փուլն ընդունված է անվանել կիմերական կամ նախասկյութական [Мелюкова, Мошкова, 1989, 7], սակայն ուսումնասիրողների կարծիքով, «կիմերական» ու «վաղսկյութական» հիմնախնդիրների լուծման գործում դեռ մնում են բազմաթիվ վիճելի հարցեր [Эрлих и др., 2009, 415]:

Կիմերական ու սկյութական մշակութային համալիրների տարանջատումը կարևոր խնդիր է, որը մինչ այժմ արմատապես չի լուծվել, մասնավորապես՝ առաջավորասիական տարածաշրջանում: Քննարկվող հիմնախնդիրը հայ հնագիտության մեջ ընդհանրապես չի ուսումնասիրվել: Տրամաբանական է թվում այն դրույթը, որ կիմերական ու սկյութական մշակույթները ինչ որ առանձնահատկություններով պետք է տարբերվեն իրարից և այդ տարբերությունները պետք է արտացոլված լինեն հնագիտական համալիրներում [Тереножкин, 1976, 182; Качалова, Алексеев, 1993, 51]: Խնդիրը կարելի է ձևակերպել այսպես. մինչ այժմ «սկյութական» համարվող անհամամասն/անհամաչափ բաղադրիչներից կազմված «մշակույթում» գտնել ոչ սկյութականը: Պետք է հաշվի առնել նաև, որ սկյութականից տարբերվող այդ կիմերականը ևս պայմանական հասկացություն է և կարող է նույնպես անհամասեռ լինել: Այդ պատճառով, նախասկյութական ժամանակաշրջանի մերձսևծովյան հուշարձանների համար առաջարկվում է գործածել «վաղքոչվորական» ընդհանրական եզրը [Махортых, 1994, 31]: Սակայն, եթե գրավոր աղբյուրների հիման վրա կիմերներին և սկյութներին հնարավոր է առանձնացնել իրարից, ապա հնագիտական մշակույթների միջև եղած տարբերությունները դժվար են նշմարվում [Хуссейн, 2017, 131]: Նախկինում գրեթե հայտնի չէին Առաջավոր Ասիայում հայտնաբերված մինչսկյութական ժամանակաշրջանի կիմերական «հնություններ» [Тереножкин, 1976, 205]: Այնքան անորոշ ու աղոտ են կիմերների մասին եղած տեղեկությունները, որ կիմերական հիմնախնդիրը որոշ լեզվաբանների ներկայանում է

իբրև օդատեսիլ [Трубачев, 1976, 40]: Ոչ վաղ անցյալում կիմերական հիմնախնդրի փոխարեն գործածվում էր «կիմերական առեղծված» արտահայտությունը [Kristensen, 1988, 6]: Անդրկովկասի նախասկյութական համալիրների առանձնացումը և պարբերացումը բարդ հիմնախնդիր է համարվում [Вальчак 2016, 29]: Առավել հեռանկարային է թվում կիմերների վերաբերյալ հնագիտական տվյալների փնտրտուքը Կովկասում [Кузнецова, 2014, 169]:

Հիմնախնդրի արդի վիճակը: Տասնամյակներ առաջ սկսեց կիրառվել «կիմերա-սկյութական մշակույթ» եզրը [Воронов, 1980, 200; Медведская, 1992, 105], թեև երկու բաղադրիչներից կազմված միասնական այս «մշակույթի» գոյությունն ապացուցված չէր: Ի. Ն. Մեդվեդսկայան հիշյալ եզրի կիրառության համար բավարար էր համարում Իրանում և Թուրքիայում հայտնաբերված հնագիտական համապատասխան արտեֆակտերի տիպաբանական նմանությունը: Կիմերների և սկյութների հնագիտական մշակույթ(ներ)ի միասնության և նույնության մասին խոսք է գնում նույն հեղինակի «Բանավեճի ամփոփումը» հոդվածում [Медведская, 1994, 124, 125, 129]: Ապրիորի ընդունվում է կիմերների և սկյութների զենքի ու ձիասարքի նույնականությունը, որը ոչ միայն վիճելի է, այլև բավարար չէ ապացուցելու այս երկու տարբեր ցեղախմբերի՝ մեկ հնագիտական մշակույթի պատկանելության թեզը: Հակառակ դեպքում՝ պետք է համարել, որ մ.թ.ա. VII դարում Գամիրքի ու Սակաշենի մշակույթները նույնական են եղել, որը մեզ հավանական չի թվում: Հատկապես հարկ է նշել «սկյութական երրորդության» բաղադրիչներից մեկի՝ կենդանական/գազանային ոճի, բացակայության փաստը կիմերական մշակույթում, որին բնորոշ է երկրաչափական զարդաբանվածքը, հատկապես՝ շրջանի մեջ ներառված շեղանկյան պատկերով հորինվածքը [Тереножкин, 1976, 173, 174]: Ժամանակակից կիմերագիտության մյուս խոցելի կողմը կարելի է համարել մերձավորարևելյան հնագիտական աղբյուրների սուղ լինելը [Хуссейн, 2019, 23]:

Այսօր արդեն կարելի է խոսել կիմերական (Նկ. 1ա-բ) ու սկյութական (Նկ. 1գ) դամբանային կառույցների, մահարձանների (Նկ. 2ա, 2բ-գ) և թաղման ծիսակարգերի (մասնավորապես՝ կմախքների դիրքի) առանձնահատկությունների մասին: Տարբերություններ են նկատվում թե՛ զենքի, թե՛ ձիասարքի հավաքածոներում: Այսպես, «կիմերական» սուրը՝ հետզհետե լայնացող և ծայրի մոտ կտրուկ նեղացող շեղբով (Նկ. 3ա), ակնհայտորեն տարբերվում է «սկյութական» համարվող սրից (Նկ. 3բ): Որոշ հետազոտողներ անդրադարձել են «կիմերական» դաշույններին [Таиров, 2002]: Սուր ծայրի մոտ քիչ լայնացող շեղբով դաշույն է հայտնաբերվել Բալկի գյուղի «Վիսոկայա մոգիլա» դամբանաբլուրի № 5 «կիմերական» ներթող թաղումում [Тереножкин, 1976, 31, 32, рис. 6, 1.]: Հարկ է անդրադառնալ նաև «թռչնագլուխ բլթակով» երկմետաղ մարտական կացինների առկայությանը կիմերական համալիրներում (Նկ. 4ա) ու դրանց բացակայությանը զենքի սկյութական հավաքածոներում, որտեղ քլունգաձև կացիններն

առանց բլթակի են (Նկ. 4բ): Վերջիններում բացակայում են նաև մարտական մուրճերը, որոնք առկա են կիմերական համալիրներում [Тереножкин, 1976, рис. 97, 42, 62, 73]: Լատինական D տառի ձևն ունեցող (Նկ. 5ա) և երկօղակ ծայրերով լկամները բնորոշ են կիմերական համալիրներին, իսկ սկյութները գործածել են ասպանդակաձև վերջավորություններով լկամներ (Նկ. 5բ), որոնք նաև կիմերական հեծելասարքի մաս են կազմել: Կիմերները գործածել են բրոնզե բարակ թիթեղից պատրաստված կոնաձև սաղավարտներ: Հավանական է, որ տիպաբանական հետազոտություններով ուղեկցող գույքի կազմում բացահայտվեն այլ տարբերություններ ևս: Ընդհանուր առմամբ, Հայկական լեռնաշխարհի կիմերական համալիրները գույքի ճոխությամբ աչքի չեն ընկնում և ավելի պարզունակ տեսք ունեն, քան սկյութականները:

Ուշադրության է արժանի Ա. Ի. Իվանչիկի առաջ քաշած այն դրույթը, որ պարզելու համար, թե ինչ հնագիտական իրողություններ են թաքնված կիմերների վերաբերյալ գրավոր աղբյուրների հաղորդումների ետևում, կարիք է առաջանում անդրադառնալ ոչ միայն կիմերների բնակության հիմնական վայրերի՝ տափաստանային տարածքների նյութերին, այլ նաև Առաջավոր Ասիայի տարածաշրջաններում հայտնաբերված համապատասխան համալիրներին [Ivantchik, 2001, 12]: Կիմերների իրական գոյությունը՝ Ա. Ի. Տերենոժկինի մոտ հինգ տասնամյակ առաջ հրատարակված «Կիմերները» աշխատությունից հետո [Тереножкин, 1976, 7, 8 сл.], հնագիտորեն հաստատվում է Ս. Վ. Մախորտիխի «Հյուսիսային մերձսևծովյան կիմերների մշակույթը և պատմությունը» խորագրով ուսումնասիրության մեջ: Ըստ հնագիտական համալիրների նկարագրի՝ մերձսևծովյան տարածաշրջանում առանձնացվում են վաղ քոչվորական ցեղախմբերի տարբեր ենթախմբեր: Ընդգծվում է դրանց մշակութային անհամասեռությունը [Махортых, 2008]: Վ. Ս. Օլխովսկու մենագրության մեջ պատկերաքանդակները դիտարկվում են որպես հնագիտական սկզբնաղբյուր: Ուսումնասիրության մեջ մանրամասնորեն քննարկվում են «կիմերական» պատկերաքանդակները, որոնք հիմնավոր կռվաններ են հանդիսանում կիմերական հուշակոթողները սկյութական մարդակերպ մահարձաններից տարբերակելու համար [Ольховский, 2005]: Վերջին մեկ-երկու տասնամյակների հետազոտությունների արդյունքում որոշ փոփոխություններ են կատարվել վաղ համալիրների բովանդակության և թվագրության ճշգրտման առումով: Մասնավորապես պարզվել է, որ Ժաբոտինի № 524 դամբանաբլուրը մշակութային առումով բաղադրյալ համալիր է: Նրանում տեղ են գտել նախասկյութական տարբեր մշակույթներին բնորոշ իրեր՝ նովոչերկասկյան, կոբանյան, նախամեոտյան և կարպատա-դանուբյան: Դամբանաբլուրի կառուցման ժամանակաշրջանը «հնացվել» է մոտ երեք տասնամյակով: Այժմ այն թվագրվում է մոտավորապես մ.թ.ա. VIII դարի կեսով: Հավանական է

համարվում, որ հենց այդ՝ ժաբոտինյան փուլում է տեղի ունեցել քոչվոր ցեղախմբերի ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ ու Փոքր Ասիա, որտեղ կիմերների ներկայությունը վկայված է թե՛ գրավոր աղբյուրների տվյալներով, թե՛ կիմերական արտեֆակտերի առկայությամբ [Рябкова, 2014: 372, 373, 389, 412, 413]: Կարծում ենք, որ նման մոտեցումն ավելի է համապատասխանում պատմական ճշմարտությանը: Նույն կերպ դիտարկվել են Հյուսիսային Կովկասի ու Անդրկովկասի (հեծյալ) ռազմիկների այն դամբանային համալիրները, որոնցում բրոնզե բարակ թիթեղից պատրաստված կոնաձև սաղավարտներ են հայտնաբերվել: Սրանց տիպաբանական վերլուծության հիման վրա փորձ է արվել համաժամանակացնել անդրկովկասյան և հյուսիսկովկասյան նախասկյութական ժամանակաշրջանի հիշյալ համալիրները: Հյուսիսային Կովկասում հայտնաբերված քննարկվող տիպի սաղավարտները համարվել են ուրարտական և ասուրական նմանաձև ձուլածո սաղավարտների ընդօրինակումներ և վերագրվել մ.թ.ա. VIII դարի վերջին – VII դարի առաջին կեսին: Հյուսիսային Կովկասում դրանց հայտնվելը կապվում է դեպի Անդրկովկաս կիմերների արշավանքի հետ, ուստի նմանատիպ սաղավարտները կարող էին ի հայտ գալ հյուսիսկովկասյան տարածաշրջանում կիմերական զորախմբերի և Ռուսա I-ի բանակի առճակատումից հետո միայն, այսինքն մ.թ.ա. VIII դարի վերջից ոչ շուտ: Այսպիսով, «կիմերական» սաղավարտների գտածոների թվագրության հարցում գերակայությունը պատկանում է Արևելյան Եվրոպայի նախասկյութական դարաշրջանի ժամանակագրությանը [Вальчак, 2016]:

Մենք համամիտ ենք այն հեղինակներին, որոնք կասկածի տակ չեն առնում կիմերների ռեալ գոյությունը [Тереножкин, 1976; Махортых, 2008, 375; Махортых, Котова 2021, 72] և ընդունում ենք կիմերական ու սկյութական մշակույթների մերձավորությունը, սակայն ո՛չ նույնությունը: Կարծում ենք, որ առկա նմանություններն ավելի շուտ ձևաբանական են, քան տիպաբանական: Դրանից բխում է, որ քննարկվող ցեղախմբերը պատկանում են նույն տնտեսական-մշակութային տիպին, բայց ոչ միևնույն հնագիտական մշակույթին: Բավական է հիշել վերն ասվածը՝ կիմերական մշակույթում կենդանական կամ գազանային ոճի բացակայության մասին, որպեսզի ակնհայտ դառնա այդ երկու մշակույթների նույնականության ապացուցման անհավանականությունը: Ստեղծված փակուղային իրավիճակից ելք գտնելու նպատակով, մեր կողմից նախկինում գիտական շրջանառության մեջ է դրվել «կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը՝ ենթադրաբար տարբեր մշակույթների վերաբերյալ միահյուսված հասկացությունները սահմանազատելու հնարավորություն ստեղծելու համար [Թումանյան, 2018, 214]:

Կիմերական մշակույթի տարբերակման կարևորությունը: Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունից տարանջատելով կիմերական մշակույթը, մենք փորձելու ենք պարզել դրա տեղը Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա

հնագիտական մշակույթների շարքում: Հայկական լեռնաշխարհում կիմերական մշակույթի առկայության խնդրի ուսումնասիրության բնագավառում հրատապ է նոր մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը: Նոր մեթոդը հատկապես կարևոր է վերացնելու համար այն հակասությունը, որ կա հնագույն գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունների և այսօրվա հնագիտական պատկերացումների միջև: Այն է՝ տարաբնույթ գրավոր աղբյուրները հաղորդում են Հայկական լեռնաշխարհի մի շարք տարածաշրջաններում կիմերական ցեղախմբերի առկայության մասին, իսկ տվյալ ժամանակաշրջանի հուշարձանները պեղող հնագետները հիշյալ խնդրին գրեթե չեն անդրադառնում: Գտնում ենք, որ հնագիտական իրողությունները հնարավորինս պիտի համաձայնեցվեն և համաժամանակացվեն պատմական իրադարձությունների արդյունքում ձևավորված մշակութային իրավիճակին: Մյուս կողմից, հատկապես արդիական է այն միտքը, որ կիմերական մշակույթի ծագման և կիմերների վաղ ժամանակաշրջանի պատմության լուսաբանման խնդիրը հնարավոր չէ լուծել միայն հյուսիսսևծովյան կամ հյուսիսկովկասյան տարածաշրջանների տվյալների հիման վրա: Հենց այն պատճառով, որ քննարկման առարկան «հեծյալ ռազմիկների քոչվորական» մշակույթն է, դրա կազմավորման գործընթացում հնարավոր չէ անտեսել ո՛չ Եվրոպայի մյուս տարածաշրջանների, ո՛չ էլ Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա մշակույթների անուրանալի դերը: Ցավոք, կիմերական ու սկյութական մշակույթների հարաբերակցության պարզաբանման հիմնախնդրում մերձավորարևելյան տարածաշրջանի գործոնը մինչ այժմ զգալի չափով թերագնահատվել է:

Հայկական լեռնաշխարհում առկա կիմերական մշակույթի ուսումնասիրության հարցը ոչ միայն կարևոր է, այլև՝ արդիական: Այն անտեսելը հանգեցնում է գիտական լուրջ սխալների՝ Հայքի կիմերական մշակութային համալիրները, ակամա, վերագրվում են սկյութական, էթիունյան կամ ուրարտական մշակույթներին: Հարկ է խուսափել նաև հակառակ երևույթից: Չի կարելի բոլոր ոչ ուրարտական հնագիտական համալիրները համարել կիմերական կամ սկյութական: Անպայման պետք է հաշվի առնել էթիունյան համաժամանակյա մշակույթի գոյությունը հավաստող բազմաթիվ փաստերը:

Կիմերական մշակույթի առանձնահատկություններից են գրի և դրամի բացակայությունը: Սակայն այդ մշակույթի տարանջատման համար կարևոր են հենց գրավոր սկզբնաղբյուրների՝ ասուրաբաբելական սեպագիր արձանագրությունների, Աստվածաշնչի, հունա-հռոմեական և հայ պատմագիրների տեղեկությունները [Թումանյան, 2023, 42-51]:

Կիմերական մշակույթի սահմանազատման նոր մեթոդը: Խնդրի պարզաբանմանը նպատակաուղղված նոր մեթոդը կայանում է նրանում, որ մեր տարածաշրջանում

կիմերական հնագիտական համալիրներն առանձնացնելու համար ներմուծվել են դրանք բնութագրող որոշակի հատկանիշներ: Դրանց կիրառման շնորհիվ ավելացել է ուսումնասիրությամբ ստացված արդյունքների պատմական իրականությանը մոտ լինելու հավանականությունը: Թեմային առնչվող բազմաքանակ տվյալներն ամփոփելիս մենք գործ ենք ունեցել հնագիտական երեք տիպի տեղեկությունների հետ: Դրանց հիմնական մասը վերաբերում է առանձին դամբանային համալիրներին, սակայն կա նաև հաղորդումների մի ստվար հատված, որտեղ խոսք է գնում դամբանախմբի կամ դամբանադաշտի մասին ընդհանրապես: Այդ տիպի տեղեկատվությունը հնարավոր չէ վերագրել որոշակի դամբարանի, առավել ևս, երբ հաճախ անհայտ է մնում, թե տվյալ մշակույթին պատկանող թաղման քանի՞ համալիր կա այդ դամբանադաշտում: Սակայն, չօգտագործել այս երկրորդ տիպի տեղեկությունները, նշանակում է նաև հատկանիշների մակարդակում զրկվել բազմաթիվ կարևոր փաստերից: Միևնույն ժամանակ, նույն աղյուսակում ընդգրկել մեկական տողով ներկայացվող վիճակագրական տվյալներ՝ ընդամենը դամբանային մեկ համալիրի և համախմբությամբ՝ մի ամբողջ դամբանադաշտի վերաբերյալ (թեկուզև թռուցիկ հաղորդումներից քաղված), ճիշտ չի լինի, քանի որ դրանք համարժեք միավոր-հասկացություններ չեն և դրանց «կշիռը»՝ հատկանիշների ընդգրկման թե՛ որակական, թե՛ քանակական հարաբերակցության առումով, տարբեր է: Հատկանիշների ընդգրկման որակական առումով դամբանախմբերը, անշուշտ, զիջում են դամբանային առանձին համալիրներին, քանի որ վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությունն ավելի մանրամասն ու հանգամանալից է: Իսկ քանակական առումով, բնականաբար, ավելի շատ են դամբանախմբերի հատկանիշները, քանի որ, այնուամենայնիվ, գործ ունենք բազմաթիվ դամբանային համալիրների համախումբ տվյալների հետ: Ուստի, ձեռք բերված տվյալներն ամփոփ ներկայացված են երկու տիպի վիճակագրական աղյուսակների տեսքով: Մեկում տեղ են գտել միայն առանձին դամբանային համալիրներին առնչվող և հաշվառման ենթակա կոնկրետ տեղեկությունները [վիճակագրական աղյուսակ Ա], իսկ մյուս տեսակի աղյուսակներում ընդգրկված են ընդհանուր ձևով դամբանախմբերին կամ մեր քննարկած դամբարաններից բացի՝ տվյալ դամբանադաշտի «այլ» դամբանային համալիրների համախմբությանը վերաբերող տեղեկությունները [վիճակագրական աղյուսակ Բ]: Երրորդ տիպի տեղեկությունները վերաբերում են բնակատեղիներին: Դրանք նույնպես ամփոփված են վիճակագրական աղյուսակում [վիճակագրական աղյուսակ Գ]:

Նոր մեթոդի համաձայն, Հայկական լեռնաշխարհի հուշարձանների համակարգում առանձնացվել են որոշակի հատկանիշներով մի շարք դամբանային և բնակելի համալիրներ, որոնց, հավանաբար, կարելի է անվանել կիմերական: Առայժմ, մեր կողմից ընտրվել են 14 դամբանախմբերի պատկանող 57 դամբարաններ, 5 «այլ» դամբանախմբեր և 9 բնակատեղիներ, որոնցից յուրաքանչյուրում առկա են կիմերական մշակույթին բնորոշ

հատկանիշներ կամ հատկանիշ հանդիսացող իրեր: Գիտական քննության ընթացքում հաշվի են առնվել դամբանային համալիրի կառուցվածքային տարրերի, հուղարկավորման ծիսակարգի և զոհաբերությունների վերաբերյալ տվյալները: Դամբանային համալիրի նույնացման գործում մենք առաջնային ենք համարում դամբանախցի պատ(եր)ի կոր լինելը, այդ թվում՝ կատակոմբները (նկ. 1ա) և թաղման կրկնաստառ խցերը, դամբանային համալիրի կազմում կիմերական (ոչ մարդակերպ) մահարձանի կամ հուշակոթողի առկայությունը, մարդկանց զոհաբերությունները (բազմամարդ այնպիսի թաղումները, որոնցում կմախքներից մեկը կամ մի քանիսն առանձնանում են մյուսներից իրենց դիրքով, հանգչելատեղով կամ այլ հատկանիշներով), ինչպես նաև *իջեցուկ և եղբայրական* թաղումները: Քանի որ քննարկվող դամբարաններում, հաճախ, հեծյալ ռազմիկներ են ամփոփվել, ուստի կիմերական թաղումների համար առանձնացվել են ձիու և/կամ ձիասարքի առկայությունը (որոշակի տիպերի լկամներ, ճակատանոցներ), ինչպես նաև շան զոհաբերությունը: Ուղեկցող գույքի կազմում բնորոշիչ/մարկեր են համարվել հատկանիշ հանդիսացող հետևյալ իրերը. կոր (լայն) դանակները, ակինակները, «կիմերական» սրերն ու դաշույնները, բոլորատեգերը, թռչնակերպ բլթակով քլունգաձև մարտական կացինները, կիմերական արխաիկ տիպի նետասլաքները, բրոնզե բարակ թիթեղից պատրաստված կոնաձև սաղավարտները, կախօղակով սրոցաքարերը, զարդախողովակները, ներճկված ապարանջանները, նեղ՝ ընդգծված նստուկով, միականթ (մատնեքավոր) գավաթները:

Նորահայտ փաստերի վերլուծությունները մեզ հիմք են տալիս եզրակացնել, որ Հայաստանի կիմերական տիպի հնագիտական համալիրներում պետք է օրինաչափ համարել ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց աշխատանքի գործիքների առկայությունը՝ կամեր, սրոցաքարեր, բզեր, տնտեսական դանակներ, տաշուրագներ, սանդեր, աղորիքներ, ձձումներ, իլիկներ: Հիշենք, որ մ.թ.ա. VIII-VII դարերի ուրարտական հուշարձանների պեղումներով հայտնաբերված զենքերը պատրաստված են բացառապես երկաթից [Куфтин, 1941, 53; Мартиросян, 1956, 83]: Այսպիսով, քննարկվող խնդրի արմատական լուծման համար ցուցաբերել ենք հայեցակարգային նոր մոտեցում: Մեր ընտրանքի մեջ են մտել տղամարդկանց այն դամբարանները, որոնցում համատեղ առկա են կիմերական թաղումներին բնորոշ առնվազն չորս հատկանիշներ: Կին կամ երեխա ննջեցյալների դեպքում կարելի է բավարար համարել մեկ բնորոշիչ/մարկեր հատկանիշի առկայությունը (օրինակ, երբ թաղումը հիմնական է ու այն կատարվել է **կատակոմբում**) և համապատասխան թվագրությունը (մ.թ.ա. VIII դարի վերջ – VII/VI դար): Կարծում ենք տղամարդկանց թաղումներում փոխադարձ հանդիպող չորս հատկանիշը, որոնցից առնվազն մեկը՝ բնորոշիչ/մարկեր, բավարար է օպտիմալ համարվելու համար: Թեև

վիճակագրական վերլուծությունները պարզ ներկայացնելու նպատակով յուրաքանչյուր հատկանիշի տրվում է միավոր արժեք, ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանք իրականում չեն կարող հավասարարժեք լինել: Նույնիսկ բուն կիմերական հատկանիշները, ինչպիսիք են թաղման կատակոմբային կառույցները, կիմերական ոչ մարդակերպ մահարձանները, ասպանդակաձև, ութաձև կամ D-աձև վերջավորություններով լկամները, կիմերական սրերն ու դաշույնները, խողովակակոթառ կամ «կիմերական արխաիկ տիպի» նետասլաքները, տվյալ փակ համալիրի մշակութային պատկանելության բնորոշման հարցում հավասար «կշիռներ» չեն կարող ունենալ: Օրինակ, կատակոմբի կամ որոշակի տիպի քարե մահարձանի (ոչ մարդակերպ) առկայությունը խոսուն վկայություն է դամբարանի մշակութային պատկանելության վերաբերյալ, մինչդեռ առանձին, թեկուզ և «կիմերական արխաիկ տիպի» նետասլաքի հայտնաբերումը դեռ չի նշանակում, որ գործ ունենք հատկապես կիմերական թաղման հետ: Էլ չենք խոսում ջլաղեղով օժտված խողովակակոթառ նիզակի մասին, որը կիմերական զինական համալիրի բաղադրատարրերից է, սակայն բնորոշիչ/մարկեր չի հանդիսանում: Կիմերական մշակույթը վեր հանելու նպատակով, մեր կողմից քննարկվել են ընդհանուր առմամբ վեց տասնյակից ավել հատկանիշներ [վիճակագրական աղյուսակ Ա]: Այսպես կոչված «այլ դամբանախմբերը», որոնց հնագիտական հետազոտությամբ գրանցվել է առնվազն 5 քննարկվող հատկանիշ՝ համախմբությամբ, որոնցից առնվազն մեկը՝ բնորոշիչ/մարկեր, ընդգրկվել են առանձին ցուցակում [վիճակագրական աղյուսակ Բ]: Վերջապես, մեր ընտրանքի մեջ են մտել միայն այն բնակատեղիները, որոնցում առկա են կիմերական բնակելի համալիրներում հանդիպող երեք տասնյակից ավել ընտրված հատկանիշներից առնվազն հինգը, այդ թվում՝ գոնե մեկ բնորոշիչ հատկանիշ [վիճակագրական աղյուսակ Գ]:

Եզրակացություն: Կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում՝ մեր կողմից առայժմ ընտրվել են 14 դամբանախմբերի պատկանող 57 դամբարաններ, 5 «այլ» դամբանախմբեր և 9 բնակատեղիներ, որոնցից յուրաքանչյուրում առկա են կիմերական մշակույթին բնորոշող անհրաժեշտ քանակությամբ հատկանիշներ կամ հատկանիշ հանդիսացող իրեր: Դամբանախմբերից 12-ը և դամբարաններից 55-ը գտնվում են Շիրակի տարածքում, մյուսները՝ Արևմտյան Հայաստանում (Ամասիայում, Ծոփքում): Հինգ «այլ» դամբանախմբերից մեկը տեղադրվում է Արագածոտնում, 2-ը՝ Շիրակում, 1-ական՝ Բարձր Հայքում և Աղձնիքում: Ինը բնակատեղիներից չորսն ընկած են Այրարատում (1-ը՝ Արագածոտնում, 3-ը՝ Շիրակում), մնացած 5-ը՝ Գամիրքում ու հարակից տարածաշրջաններում, մասնավորապես՝ Փոքր Հայքում: Այսպիսով, Շիրակում են գտնվում կիմերական հատկանիշներով 12 դամբանախմբեր և 3 բնակատեղիներ, որոնց քանակը դեռ կարող է աճել՝հնագիտական նոր ուսումնասիրությունների արդյունքում: Ուշագրավ է, որ Շիրակի կիմերական հատկանիշներով բոլոր 3 բնակատեղիներն էլ

ուղեկցվում են համապատասխան դամբանադաշտով կամ դամբանախմբերով (Շիրակավան, Քեթի, Գյումրի)։

Կիմերների սփռման հիմնական տարածքներից մեկը Շիրակի սարահարթն է, որտեղից այդ ցեղախմբերը կարող էին ներթափանցել Արագածոտն գավառի արևմտյան մասերը։ Նրանց հետքը նշմարվում է նաև Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Բարձր Հայքում, Ծոփքում և Աղձնիքում։ Կիմերական ցեղախմբերի մի զգալի զանգված, ըստ երևույթին, հիմնավորվել է Գամիրքում՝ Փոքր Հայքի հարևանությամբ, որտեղից շարժվել է դեպի հյուսիս և արևմուտք։

Հնագիտական համալիրների ուսումնասիրությամբ ձեռք բերված տվյալները, ընդհանուր առմամբ, համահունչ են գրավոր աղբյուրների ընձեռած տեղեկություններին և պատմագիտական մերօրյա հետազոտություններով ստացված արդյունքներին, որոնք ընդհանրացնելով կարելի է եզրահանգել, որ Առաջավոր Ասիա ներխուժած կիմերների զորաջոկատները, հավանաբար, բաժանվել են երկու խոշոր խմբի՝ արևմտյան և արևելյան։ Այս երկու խմբերից յուրաքանչյուրն էլ, իր հերթին, բաժանվել է երկու ճյուղի։ Արևմտյան (պայմանական առաջին) խումբը հիմնավորվել է Գամիրքում, որի ճյուղերից մեկը ներխուժել է Փռյուգիա, հետագայում շարժվելով դեպի արևմուտք՝ Փոքր Ասիայի արևմտյան ծովափ, իսկ երկրորդ ճյուղն արշավել է դեպի հյուսիս՝ հասնելով Սև ծովի հարավային ափին։ Արևելյան (պայմանական երկրորդ) խմբի մի ճյուղի հետքերը նկատելի են Շիրակում, մյուս ճյուղի հետքերը, ըստ երևույթին, տանում են Ուրմիա լճի հարավարևմտյան ավազան։ Ինչպես տեսնում ենք, հնագիտական հետազոտությունների արդյունքները չեն հակասում գրավոր աղբյուրների հաղորդումներին։



Նկար 1ա. Ոսկեհասկի կատակոմբները [ըստ Петросян 1989, Таб. 63, 5, 6]։



Նկար 1բ. Նորշունթեփե, դամբարան № 2 [ըստ Ivantchik 2001: 24, Abb. 3]:



Նկար 1գ. Հարժիս, № 1-3 դամբարանների հատակագծերը [ըստ Խնկիկյան 1993. Աղ. XCVI]:



Նկար 2ա. Զուբովսկայա, I մահարձան [ըստ Ольховский 2005: 172, Ил. 21]

:

Նկար 2բ. Լոռի բերդ, դամբարան № 63, մահարձան [ըստ Devedjyan 2009: 197, Tab. V]:



Նկար 2գ. Իորի գետի ավազան, մահարձան [ըստ Mehnert 2008: 88, 89, Taf. 95, 12]:



Նկար 3ա. Կլազոմեն, հոնիական սարկոֆագի վրա պատկերված կիմեր հեծյալներ [ըստ Дьяконов 1956: 235, Рис. 41]:



Նկար 3բ. Շիկահող, № 10 դամբարանի թաղման գույքը [ըստ Xnkikyan 2002, 243, Pl. LXXXII]:



Նկար 4ա. Իմիրլերի (Ամասիայի մարզ) դամբարանի թաղման գույքը [ըստ Ünal 1982, 67, Abb. 1]:



Նկար 4բ. Խոտանոց, № 2 կրոմլեխի թաղման գույքը [ըստ Мартиросян 1954, Таб. XV]:



Նկար 5ա. Արթիկ, № 433 կատակոմբի մետաղյա իրերը [ըստ Хачатрян 1975, 204, Рис. 117]:



Նկար 5բ. Կելերմեսի դամբանաբլուրներում հայտնաբերված լկամները [ըստ Ильинская, Тереножкин 1983, 66]:

Գրականության ցանկ

T'umanyan 2018- T'umanyan G., «Kimera-skyut'akan mshakut'ayin yndhanrut'yun» yezruyt'y, khmb., Avetisyan H., Aragatsi t'ikunk'um. Hnagitakan hetazotut'yunner nvirvats T. Khach'atryani hishatakin, Yerevan, «Gitut'yun» hrat., 2018, ej 214-217: **(in Armenian)**

T'umanyan 2023- T'umanyan G., Astvatsashnch'i yev patmich'neri teghekut'yunnery Haykakan lerrnashkharhum kimerneri u skyut'neri gtnvelu masin, Lraber hasarakakan gitut'yunneri, N 3, 2023, ej 42–60. **(in Armenian)**

Khnkikyan 1993- Khnkikyan O., Dambaranneri peghumner Harzhis gyughum, pat. khmb., Tirats'yan G., K'alant'aryan A., Areshyan G., Hnagitakan ashkhatank'nery Hayastani norakarruyts'nerum, I, Yerevan, «Hayastani GA hrat.», 1993, ej 97-102: **(in Armenian)**

Alekseyev 1992- Alekseyev A., Skifskaya khronika (Skify v VII-IV vv. do n.e.: istoriko-arkheologicheskiy ocherk), Sankt Peterburg, Izd. «Peterburgkomstat», 1992, 206 s. **(in Russian)**

Val'chak 2016- Val'chak S., Predskifskaya arkheologiya Vostochnoy Yevropy i nekotoryye pamyatniki Zakavkaz'ya, otv. red. Balakhvantsev A., Kullanda S., Kavkaz i step' na rubezhe epokhi pozdney bronzy i rannego zheleza: materialy mezhdunarodnoy nauchnoy konferentsii, possvyashchennoy pamyati M. N. Pogrebovoy, Moskva, «Izd. Instituta vostokovedeniya RAN», 2016, s. 28-41. **(in Russian)**

Voronov 1980- Voronov YU., O khronologicheskikh svyazyakh kimmeriysko-skifskoy i kolkhidskoy kul'tur, red. Vashchenko L., Skifiya i Kavkaz. Sbornik nauchnykh trudov, Kiyev, Izd. «Naukova dumka», 1980, s. 200-218. **(in Russian)**

D'yakonov 1956- D'yakonov I., Istoriya Midii, Moskva-Leningrad, «Izd. AN SSSR», 1956, 485 s. **(in Russian)**

Ivanchik 1990- Ivanchik A., Kimmeriytsy i Urartu nakanune vos'mogo pokhoda Sargona II, Vestnik drevney istorii, № 3, 1990, s. 3-19. **(in Russian)**

Ivanchik 1996- Ivanchik A., Kimmeriytsy. Drevnevostochnyye tsivilizatsii i stepnyye kochevniki v VIII-VII vv. do n. e., Moskva, Izd. «Nauka», 1996, 324 s. **(in Russian)**

Il'inskaya, Terenozhkin 1983- Il'inskaya V., Terenozhkin A., Skifiya VII- IV vv. do n.e., Kiyev, Izd. «Naukova dumka», 1983, 380 s. **(in Russian)**

Kachalova 1993- Kachalova N., Alekseyev A., Arkheologichskiye aspekty kimmeriyskoy problemy, Alekseyev A., Kachalova N., Tokhtas'yev S., Kimmeriytsy: etnokul'turnaya prinadlezhnost', S. Peterburg, «Izd. Informatsionno-issledovatel'skogo instituta «Yermakov»», 1993, s. 51-89. **(in Russian)**

Kuznetsova 2014- Kuznetsova T., Kimmeriyskiye strely, otv. red. Korobov D., Ye.I. Krupnov i razvitiye arkheologii Severnogo Kavkaza, XXVIII Krupnovskiye chteniya, Materialy mezhdunarodnoy nauchnoy konferentsii, Moskva, «Izd. Instituta arkheologii RAN», 2014, s. 168-169. **(in Russian)**

Kuftin 1941- Kuftin B., Arkheologicheskiye raskopki v Trialeti, I, Tbilisi, «Izd. AN GrSSR», 1941, 491 s. **(in Russian)**

Martirosyan 1954- Martirosyan A., Raskopki v Golovino, Yerevan, «Izd. AN ArmSSR», 1954, 116 s. **(in Russian)**

Martirosyan 1956- Martirosyan A., Raskopki v Kirovakane i nekotoryye pamyatniki ranneurartskogo perioda (IX-VIII vv. do n.e.), Izvestiya obshchestvennykh nauk, N 9, 1956, s. 61-84. **(in Russian)**

Makhortykh 1994- Makhortykh S., Kimmeriytsy na Severnom Kavkaze, Kiyev, Izd. «Tirazh», 1994, 94 s. **(in Russian)**

Makhortykh 2008- Makhortykh S., Kul'tura i istoriya kimmeriytsev Severnogo Prichernomor'ya, Dissertatsiya na soiskaniye uchenoy stepeni doktora istoricheskikh nauk, Kiyev, «Institut arkheologii NANU», 583 s. **(in Russian)**

Makhortykh, Kotova 2021- Makhortykh S., Kotova N., «Kimmero-skifskiye» drevnosti iz Tsentral'noy Anatolii, Vostok, N 6, 2021, s. 54-77. **(in Russian)**

Medvedskaya 1992- Medvedskaya I., Periodizatsiya skifskoy arkhaiki i Drevniy Vostok, Rossiyskaya arkheologiya, N 3, 1992, s. 86-107. **(in Russian)**

Medvedskaya 1994- Medvedskaya I., Zaklyucheniye po diskussii, Rossiyskaya arkheologiya, N 1, 1994, s. 123-133. **(in Russian)**

Melyukova, Moshkova 1989- Melyukova A., Moshkova M., Vvedeniye, otv. red. Melyukova A., Arkheologiya SSSR. Stepi yevropeyskoy chasti SSSR v skifo-sarmatskoye vremya, Moskva, Izd. «Nauka», 1989, s. 5-8. **(in Russian)**

Ol'khovskiy 2005- Ol'khovskiy V., Monumental'naya skul'ptura naseleniya zapadnoy chasti yevraziyskikh stepey epokhi rannego zheleza, Moskva, Izd. «Nauka», 2005, 299 s. **(in Russian)**

Ryabkova 2014- Ryabkova T., Kurgan 524 u s. Zhabotin v sisteme pamyatnikov perioda skifskoy arkhaiki, Rossiyskiy arkheologicheskiy yezhegodnik, N 4, 2014, s. 372-432. **(in Russian)**

Tairov 2002- Tairov A., «Kimmeriyskiye» kinzhaly iz Yuzhnogo Zaural'ya, Nizhnevolzhskiy arkheologicheskiy vestnik, vyp. 5, 2002, s. 194-200. **(in Russian)**

Terenozhkin 1976- Terenozhkin A., Kimmeriytsy, Kiyev, «Naukova dumka», 1976, 224 s. **(in Russian)**

Trubachev 1976- Trubachev O., O sindakh i ikh yazyke, Voprosy yazykoznaniya, N 4, 1976, s. 39-63. **(in Russian)**

Khachatryan 1975- Khachatryan T., Drevnyaya kul'tura Shiraka (III-I tys. do n. e.), Yerevan, «Izd. Yerevanskogo universiteta», 1975, 278 s. **(in Russian)**

Khusseyn 2019- Khusseyn O., Kimmeriyskaya problema v rossiyskoy i urainskoy arkheologicheskoy nauke i puti yeyo resheniya, Avtoreferat dissertatsi na soiskaniye uchenoy stepeni kandidata istoricheskikh nauk, Voronezh, «Izd. Voronezhskogo gosudarstvennogo universiteta», 2019, 24 s. **(in Russian)**

Erlikh i dr. 2009- Erlikh V., Val'chak S., Maslov V., Protomeotskiye pogrebeniya iz kurgana 2 mogil'nika Uashkhitu I, otv. red. Bessonova S., Epokha rannego zheleza, Sbornik nauchnykh trudov k 60-letiyu S. A. Skorogo, Kiyev-Poltava, «Izd. Instituta arkheologii NAN Ukrainy», 2009, s. 394-417. **(in Russian)**

Devedjyan 2009- Devedjyan S., Stone Stelae in the Burial Ground of Lori Berd, Aramazd: AJNES, vol. IV/2, Yerevan, p. 146-153.

Ivantchik 2001- Ivantchik A., Kimmerier und Skythen, Moskau, „Philipp von Zabern“, 2001, 324 s.

Kristensen 1988- Kristensen A., Who were the Cimmerians, and where did they come from? Copenhagen, Pub. “Munksgaard”, 1988, 141 p.

Mehnert 2008- Mehnert G., Skythika in Transkaukasien. Reiternomadische Sachkultur im archäologischen Fundkontext, Wiesbaden, „Dr. Ludwig Reichert Verlag“, 2008, 205 s.

Sulimirski 1954- Sulimirski T., Scythian Antiquities in Western Asia, Artibus Asiae, Vol. 17, No. 3/4, 1954, p. 282-318.

Ünal 1982- Ünal V., Zwei Gräber Eurasischer Reiternomaden im Nördlichen Zentralanatolien, Beiträge der Allgemeinen und Vergleichenden Archäologie, N 4, München, 1982, s. 65-81.

Xnkikyan 2002- Xnkikyan O., Syunik՛ During the Bronze and Iron Ages, Barrington, “Mayreni Publishing”, 2002, 258 p.